

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

**ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող
ՀԶԲԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արտավազդ Գալստյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 15 ղեկտեմբերի 2016թ. Թիվ 32 որոշմամբ

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ 2016թ.

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԿԱԻՆ	Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ՀՖՄ ՀԿ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
ԲԲՀ	Բազմաբնակավայր համայնք
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԶԾ	Մարզային զարգացման ծրագիր
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԾ	Տարածքային զարգացման ծրագիր
ՀԶՀԾ	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀԶՔԾ	Համայնքի զարգացման քառամյա ծրագիր
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ԲԱԽ	Բնակավայրային աշխատանքային խումբ
ՀԿՏՀ	Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ
ՈՒԹՀՎ	Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՔՀՄՀ	Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներ
ՀՈՍԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՔԾ-ի հիմնական նպատակների սահմանում
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում

Եզրափակում

Հավելված 1. Համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը

Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ- տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը

Հավելված 3. ՀԶՄ անձնագրեր

Հավելված 4. ՀԶՄ ֆինանսավորման ամփոփաթերթ

Հավելված 5. ՀԶՄ մոնիթորինգի անձնագրի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2016-2020թթ. ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ն ղիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը՝ ՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՀԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶՀԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶՔԾ-ում՝ էլնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք չորս տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գործողությունները և միջոցառումները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք չորս տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ էլնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հինգամյա ծրագիրն՝ ըստ տարիների:

ՀԶՀԾ-ի եզրափակումում ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածները ներառում են՝

- համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը,

- համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը,
- համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի
- համայնքում առկա անասնազվխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը,
- համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ դրանց օրինակելի ձևի,
- համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Ապարան-Արթիկ ավտոմայրուղուց աջ: Մարզկենտրոնից գտնվում է 48 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ջանկիթափա, Ջանգի, անվանումները: Վարդաբլուր է վերանվանվել 1950 թ-ին: Գյուղի տարածքում գտնվում են հին գյուղատեղիներ, սրբատաշ քարերով եկեղեցի: Տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի եւ Արագածի լեռնազանգվածի միջեւ ընկած գոգավորությունում: Գտնվում է ծովի մակարդակից 2075 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են: Գյուղի բնակչության մի մասի նախնիները ներգաղթել են Արեւմտյան Հայաստանի Մուշի գավառից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 373, 1897 թ-ին՝ 267, 1926 թ-ին՝ 706 , 1959 թ-ին՝ 667, 1979 թ-ին՝ 600, 1989 թ-ին՝ 486 բնակիչ: Համայնքի բնակչությունը կազմում է 639 մարդ, որից 51% տղամարդիկ են, 49%՝ կանայք: Բնակչության մեջ մինչաշխատունակները կազմում են 14%, աշխատունակները՝ 64%, հետաշխատունակները՝ 22%: Գյուղն ունի 157 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Մշակում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի մոտ 30%, որոնց մեջ արոտավայրերը եւ վարելահողերը զբաղեցնում են միեւնույն մակերեսը՝ 58հա, խոտհարքերը՝ 25 հա: Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելուրվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 639 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 328 և կանայք՝ 311: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝ (աղուսյակ 1)

Աղյուսակ 1.

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	639
	Տղամարդիկ	328
	Կանայք	311
	0-6 տարեկան , այդ թվում՝	37
	7-17 տարեկան	95
	18-63 տարեկան	446
	63-ից բարձր տարեկան	61
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	80
	Տարիքային և աշխատանքային	61
3.	Փախստականներ	4
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	0
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	7
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	19
	Մանկուց հաշմանդամներ	4
9.	Աշխատունակներ	442
10.	Զբաղվածներ	240
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	159
	Գրանցված	15
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	151
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	26
	Նպաստառու ընտանիքների թիվը	24

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2016թ. սեպտեմբերին 18-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 5 անդամներից, և համայնքի ղեկավարը, որը կազմավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 6 աշխատակիցներից: Ստորև

բերվում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

- համայնքի ղեկավար -	1 միավոր, 192,0 հազ. Դրամ
- համայնքի ղեկավարի տեղակալ	1 միավոր, 92,0
- համայնքի աշխատակազմի քարտուղար -	1 միավոր, 95,0 հազ. դրամ
- առաջատար մասնագետ - հաշվապահ -	1 միավոր, 78,0 հազ. դրամ
- առաջատար մասնագետ -	1 միավոր, 78,0 հազ. դրամ
- առաջատար մասնագետ -	1 միավոր, 78,0 հազ. դրամ
- համակարգչային օպերատոր -	1 միավոր, 58,5 հազ. դրամ
- հավաքարար -	1 միավոր, 23,0 հազ. դրամ
Ընդամենը ամսական գումարը -	7 միավոր, 694,5 հազ. դրամ

Համայնքային ենթակայությամբ գործում է <Վարդաբլուր համայնքի մանկապարտեզ> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ), որի աշխատակազմը բաղկացած է 5 աշխատակիցներից: Դրանց հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերն են՝

- տնօրեն -	1 միավոր, 78,0 հազ. դրամ
- դաստիարակ -	0.75 միավոր, 78,0 հազ. Դրամ
- դաստիարակ -	0.75 միավոր, 78,0 հազ. Դրամ
- խոհարար -	0.75 միավոր, 78,0 հազ. Դրամ
- պահակց -	0.25 միավոր, 78,0 հազ. Դրամ
Ընդամենը ամսական գումարը	3,5 միավոր, 390,0 հազ. դրամ

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան. բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի. գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի. դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում. ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է 01.06.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը: Ի լրումն սրան, բերված է նաև համայնքի սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքում չկան գործող ոչ համայնքային ենթակառուցվածքային կազմակերպություններ, պետական և կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն) և քաղաքական կուսակցությունների մասնաճյուղեր:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականություն համարվող համանուն բլրից ինքնահոս եկող խմելու ջրատարը, ջրի պաշարների ամբարման և բաշխման համար նախատեսված կիսակառույց մինի ջրամբարների համակարգը կառուցվել են 50-ական թվականներին: 2014 թվականին <<Վերջին Օրերի Սրբեր>> բարերարների օգնությամբ փոխվել են ջրատարները և մասնակի վերանորոգվել է գլխավոր ջրամբարը իսկ մինի ջրամբարները (ջրառները) մինչ հիմա չեն վերանորոգվել, կատարվել են միայն մագրման և նորոգման մասնակի աշխատանքներ: Համայնքի բնակչությունը խմելու ջուրը ստանում է միայն վերևի աղբյուր կոչվող միակ ծորակից:

Համայնքն ապահովված է նաև տնտեսական ջրով, որը մատակարարում է ՀՁ ՓԲԸ-ն, նախկինում կառուցված ջրագծերի միջոցով, ինքնահոս ճանապարհով, Օրթաչյա համայնքի մոտ գտնվող Ծողկունյանց լեռնաշղթայից: Ներկայում համայնքի դպրոցը, մանկապարտեզը և գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն ապահովված է տնտեսական ջրով: Սակայն, համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ:

Համայնքը գազաֆիկացվել է 1986 թվականին, իսկ 2007 և 2009 թվականներին գազաֆիկացվել են դպրոցը և մանկապարտեզը: Ներկայումս համայնքի տնտեսությունների մոտավորապես 90%-ը օգտվում է կապույտ վառելիքից:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է մասնակիորեն՝ ամիսը մեկ անգամ, համայնքի սուղ միջոցներով: Համայնքը չունի աղբատար մեքենա, առանձին հատկացված աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի մաքրության, գեղատեսիլ բնության վրա:

Համայնքում կա 1 գերեզմանատուն, որի տարածքը ցանկապատված է մետաղյա ցանցով:

1986 թվականին համայնքի տարածքում կառուցվել է 2 հա մակերեսով տնամերձ հողամասերը ոռոգելու համար ջրամբար:

2014 թվականից համայնքի մոտավորապես 90%-ն ապահովված է փողոցային լուսավորությամբ:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան, իսկ բնակելի առանձնատների քանակը 151 է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 13590 քմ: Առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունի, իսկ նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1083,3 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 903,16 հա,
- բնակելի ֆոնդի հողեր – 58,83 հա,
- բնապահպանական նշանակության հողեր – 1,29 հա,
- անտառային և ջրային ֆոնդերի հողեր – 11,5 հա,
- արդյունաբերական նշանակության հողեր – 5,23 հա,
- էներգետիկայի ենթակառուցվածքների հողեր – 3,57 հա:

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի բոլոր 151 տնային տնտեսությունների 157 ընտանիքները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 2,70 հա, այդ թվում 2,58 հա-ը՝ վարելահող, 0,12 հա տնամերձի հետ միասին:

Համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 262,27 հա, որոնցից 61,0 հա վարելահողերը և 167,94 հա արոտավայրերը և 8,82 հա խոտհարկները, որոնք վարձակալությամբ տրամադրվում են համայնքի բնակիչներին:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվում են խոտհարքների կամ բնակչությունն անասնակերի մի մասը ստիպված է լինում գնել հարևան համայնքներից:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 449, այդ թվում կով՝ 196, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 821, այդ թվում ոչխար՝ 814, այծ՝ 7: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի միայն մեկ տնային տնտեսություն հաջողությամբ զբաղվում է նաև մեղվապահությամբ:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է Ապարանի անտառտնտեսության կողմից:

Համայնքում աղբավայր չունենալը մեծապես վնասում է բնությանը: Համայնքի տնային տնտեսություններն իրենց արտադրած կենցաղային աղբն անթույլատրելիորեն թափում են այնտեղ, որտեղ հարմար են գտնում: Այդ ուղղությամբ պետք է լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից: Համայնքն իր ուժերով ի վիճակի չէ լուծելու աղբավայրի հարցը և աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել միջհամայնքային համագործակցություն տարածաշրջանի այլ համայնքների հետ:

Վիճակն անմխիթար կարելի է համարել նաև «Օրթաճյա» հանդամասից հոսող տնտեսական ջրի ջրային ավազանում, որի որոշ հատվածներում ջուրը՝ մինչև ջրամբար հասնելը, հոսում է բաց վիճակում, և այնտեղ անարգել մուտք են գործում անասունները: Դա հղի է սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգով:

Ամենամյա մաքրման կարիք ունի նաև գյուղամիջով անցնող սելավատար առուն, գարնանային վարարումներից առաջ պարտադիր կերպով կատարվում են մաքրման աշխատանքներ:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 5 կմ, որից մայրուղուց մինչև գյուղ 2 կմ-ոց ճանապարհը, որը ասվալտապատվել է 1970-ական թվականներին, հիմա գտնվում է քայքայված և անմխիթար վիճակում, գոյացած փոսերը բավականին խոչնդոտում են մեքենաների երթևեկությանը: Մնացած 5 կմ-ոց մասը կազմում են ներհամայնքային ճանապարհները և փողոցները, որոնք կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման: Ներհամայնքային ճանապարհները և փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ:

Համայնքից մինչև մոտակա շուկա (քաղաք Ապարան) ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 17 կմ: Ներկայումս համայնքի բնակչությունը հիմնականում օգտվում է Ապարան քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարություններին:

Համայնքի տարածքում տեղակայված չեն ճանապարհային երթևեկության նշաններ՝ չնայած համայնքում շահագործվում են 56 մարդատար և 10 բեռնատար մասնավոր

ավտոմեքենա: Համայնքում կան նաև մասնավոր 19 տրակտոր, որից 3-ը թրթուրավոր են, իսկ 17-ը՝ անիվավոր:

Համայնքի տարածքում կան նաև 3 փոքր կամրջակ, որոնք գտնվում են համայնքով անցնող գետակի վրա:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են առևտրի 3 կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործունեության թույլտվության համար: Առևտրի այդ կետերը հիմնականում տեղակայված են առևտրով զբաղվողների բնակելի առանձնատներում, բացառությամբ մեկի, որը գտնվում է վագոն-տնակում:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 78 աշակերտ: Համայնքից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազում է: Դպրոցում աշխատում են 27 աշխատող, որոնցից 21-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը վերանորոգված է և ներկայում գտնվում է բարվոք վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է ջեռուցման գազային լոկալ համակարգով: Դպրոցի շենքը ներկայումս կարիք ունի միայն ընթացիկ նորոգման, ներքին հարդարման:

Համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատությունը՝ մանկապարտեզը, որտեղ հաճախում են 15 երեխաներ և աշխատում են 5 աշխատողներ: Համայնքի մանկապարտեզի շենքը վերանորոգված է, միայն կարիք է զգացվում ընթացիկ ներքին հարդարման, այն ներկայում բավարար վիճակում է, ապահովված է ջրամատակարարմամբ, ջեռուցմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով:

Մանկապարտեզը գործում է 6-ժամյա աշխատակարգով, երեխաներին տաք սնունդ չի տրվում, երեխաները մանկապարտեզում չեն քնում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ մանկապարտեզի շենքում են տեղակայված նաև գյուղապետարանը, գրադարանը և բուժկետը: Մանկապարտեզի պայմանները հնարավոր կլինի ընդլայնել միայն համայնքային կենտրոնի շենքի կառուցման դեպքում, ուր կարելի կլինի տեղափոխել վերոնշյալ հիմնարկների մի մասը:

Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը կազմում է 3000 դրամ: Մանկապարտեզի մնացած ծախսերը սուբսիդավորվում է համայնքի բյուջեից:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի տունն ավերվել է 1988-94 թթ. Ընթացքում: Ներկայումս մշակութային կյանքը համայնքում անբավարար վիճակում է: Մշակույթի տան բացակայությունն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքներում: Մի խոսքով, մշակույթի տան նոր շենքի կառուցումն օդ ու ջրի պես անհրաժեշտ է համայնքին, այս հարցում ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը:

Համայնքի գրադարանը տեղակայված է համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, ունի մոտ 6358 կտոր գիրք: Գրադարանավարի աշխատանքն իրականացնում է համայնքի աշխատակազմի համայնքային ծառայող մասնագետը:

Մեկ ուրիշ գրադարան գործում է նաև համայնքի միջնակարգ դպրոցում՝ 2300 կտոր գրքային ֆոնդով: Այդ գրադարանի պայմանները նույնպես բավարար են:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՏԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է բուժկետ՝ Ծաղկահովիտի առողջության կենտրոնի ենթակայությամբ, 1 աշխատողով: Բուժկետը տեղակայված է համայնքի համայնքապետարանի վարչական շենքում, բարվոք վիճակում է, ապահովված առաջին բուժօգնության պարագաներով:

Համայնքի վարչական տարածքում կան ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտեր, ինչպես նաև համայնքի միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև համայնքի երիտասարդները: Համայնքում գործում է ֆուտբոլի խմբակ, որը հասարակական հիմունքներով ղեկավարում է համայնքի սոցիալական աշխատողը:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի մանկապարտեզի բակային տարածքում գործում է խաղահրապարակը, այն հիմնականում ծառայում է մանկապարտեզ հաճախող, ինչպես նաև այդ թաղամասում բնակվող երեխաներին: Այդ խաղահրապարակը վերանորոգվել և ցանկապատվել է նորից համայնքի և «ԱԳՌԱ- Հայաստան» կազմակերպության Երևանի տարածաշրջանային գրասենյակի համատեղ ուժերով:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 414 աշխատունակ մարդիկ, որոնցից աշխատանքով զբաղված են 240-ը, մնացած 174-ն աշխատանք չունեն, սակայն վերջիններից միայն 15-ն են գրանցված Ծաղկահովիտի տարածաշրջանային զբաղվածության կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող համարվել գործազուրկ:

Համայնքի մոտ 179 ընտանիքներից 28-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 25 ընտանիքները (ընդհանուրի 16.5%-ը):

Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Ծաղկահովիտի տարածաշրջանային ՄՕՏԳ-ի և գյուղապետարանի կողմից:

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Հատկապես վերջին 2-3 տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հասարակական հանրօգուտ աշխատանքներին ու միջոցառումներին: Համայնքի գյուղապետարանում ամիսը 1-2 անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը (համայնքի ղեկավարը և ավագանու անդամները) և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, համայնքը ունի տեղեկատվության տարածման ժամանակակից միջոցներ (համացանցային կայք): Համայնքում մշակույթի տան կամ համայնքային կենտրոնի ոչ բարվոք վիճակը մեծապես խոչընդոտում է հանրային հավաքների ու միջոցառումների կազմակերպմանը, բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը մինչև հիմա տարերային բնույթ է կրել, ներկայումս այն սաղմնային վիճակում է: Չնայած համայնքի ՏԻՄ-երի շահագրգռվածությանը և պատրաստակամությանը, նրանք առայժմ չունեն որևէ համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման մարզային համապատասխան մարմինների հետ: Դա է պատճառը, որ համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների որևէ գնահատում, որի հիման վրա

հնարավոր կլինեն պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 3 մանր առևտրի կետերի գործունեությամբ, որոնց հետ համայնքը մշտապես պաշտպանում է լավ ու բարյացկամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, մինևույն է, համայնքում բիզնեսի զարգացման վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Ամփոփելով, համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են **հավելված 5**-ում: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա **ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները**: Դրանք են՝

- համայնքը չունի բարեկարգ գյուղապետարանի շենք, համայնքային կենտրոն և մշակույթի տուն,
- համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ,
- համայնքը չունի աղբավայր և աղբատար մեքենա, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա և ֆինանսական հնարավորություններ,
- ներհամայնքային ճանապարհները և փողոցներն անբարեկարգ վիճակում են, չունեն ճանապարհային երթևեկության նշաններ,
- համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ռոտզման համակարգ, որի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մեծամասամբ չեն մշակվում, դրանք աստիճանաբար վեր են ածվում խոտհարքների, իսկ վերջիններիս տարածքները չեն բավականացնում համայնքում անասնապահության հետագա զարգացման համար,
- համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,
- համայնքի մանկապարտեզը (նախակրթարանը) ունի ընթացիկ ներքին հարդարման կարիք,
- համայնքի դպրոցի շենքը կարիք ունի ընթացիկ նորոգման, ներքին հարդարման,
- համայնքի գյուղապետարանի շենքը չունի ջեռուցման համակարգեր, որի պատճառով ձմռանը ստիպված ենք շենքը տաքացնել վառարանների միջոցով,
- համայնքից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների, մանկապարտեզի սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,

- համայնքի աշխատունակ բնակչության մոտ ¼-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, սկնհայտ է, որ քառամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՇՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը տարածաշրջանային կենտրոն Ծաղկահովիտին, հանրապետական նշանակության Վանաձոր-Երևան ճանապարհին և ոչ հանրապետական նշանակության Ալազյազ-Արթիկ ճանապարհին)
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
- Բնակավայրին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Տնտեսական ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղապետարանի շենքի և համայնքային կենտրոնի ոչ բարերար վիճակը
- Հայանքը մայրուղուն կապող և ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Մշակույթի տան բացակայությունը
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի ոչ բավարար վիճակը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- Համայնքի գյուղապետարանի, մանկապարտեզի, գրադարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքում աղբահանության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը

- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Խոտհարքների չափաբաժնի պակաս լինելը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքը մայրուղուն կապող 2 կմ հատվածի ասվալտապատումը, ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգումը և բարեկարգումը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Համայնքային կենտրոնի շենքի վերանորոգման դեպքում հնարավորություն կստեղծվի՝ համայնքի գյուղապետարանն և գրադարանը կդառնա ավելի ընդարձակ և հարմարավետ պայմաններով, և ընդլայնելու, ամբողջական ու լիարժեք գործարկելու համամար
- Մշակույթի տան վերանորոգումը ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՔԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, , աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի բարելավման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Համայնքի զարգացման 2017-21թթ. հնգամյա ծրագրի **հիմնական նպատակներն են՝**

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,

- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի նախադարձական կրթության և դաստիարակության պայմանների ընդլայնում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-21թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքային կենտրոնի վերանարոգում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գյուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- համայնքը մայրուղուն կապող ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն,
- մարզկենտրոն Աշտարակի, տարածաշրջանային կենտրոն Ծաղկահովիտի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերի շրջանակներում,
- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
- աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,
- խմելու ջրի ջրամատակարարման ընդհանուր ջրագծի կառուցում, ներհամայնքային համակարգերի անցկացում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

2017-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների,

քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները՝ նախադպրոցական և դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Վերլուծելով համայնքի 2015-16թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները (աղյուսակ 3), կարելի է տեսնել, որ համայնքի 2015թ. բյուջեի փաստացի կատարողական ընդհանուր մուտքերը՝ 10,748.9 հազ. դրամ, 2016թ.-ին աճել են մոտ 2.6%-ով և կազմել 11,000.1 հազ. դրամ: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2014թ.-ին կատարվել է համեմատաբար ավելի ակտիվ հարկերի հավաքագրում՝ 251.2հազ. դրամի չափով:

Վերլուծելով համայնքի 2016թ. փաստացի մուտքերի ուղղությունների տեսակարար կշիռներն ընդհանուր մուտքերի մեջ, տեսնում ենք, որ սեփական մուտքերի (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմել է ընդամենը 39%, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 61%: Սա նշանակում է, որ համայնքի բյուջեի մուտքերի ճնշող մեծամասնությունը ստացվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ուղղությամբ, այսինքն համայնքի ֆինանսական անկախության (ինքնուրույնության) աստիճանն անչափ ցածր է և համայնքը մեծ կախվածության մեջ է գտնվում ՀՀ պետական բյուջեից:

Կատարելով համայնքի 2017-21թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել երկու հանգամանք: Առաջինը, նախորդ տարիներին համայնքի բյուջեում սեփական եկամուտների (հողի հարկ, գույքահարկ փոխադրամիջոցների համար, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ, այլ եկամուտներ) հավաքագրման աճ է արձանագրվել: Եվ երկրորդ, յուրաքանչյուր տարի որոշակի չափով աճել են նաև պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները: Հաշվի առնելով այդ երկու հանգամանքները, համայնքի 2016-20թթ. բյուջեների ընդհանուր մուտքերը կանխատեսվել են՝ յուրաքանչյուր տարի միջին հաշվով մոտ 1,000.0 հազ. դրամ ընդհանուր աճով նախորդ տարվա ընդհանուր մուտքերի նկատմամբ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	հազար դրամ						
		2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2017թ. փաստ.	2018թ. նախատ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴՀԱՄՆԱԿԱՆ (I+II+III)*	10748,9	10965,4	11000,1	13098,7	13505,0	14550,0	15650,0
I.	ԸՆԴՀԱՄՆԱԿԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	10748,9	10965,4	11000,1	13098,7	13505,0	14550,0	15650,0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	3300,6	3516,9	3551,6	3374,3	3505,0	3550,0	3650,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2450,6	2596,9	2150,7	2099,3	2100,0	2200,0	2250,0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0,0	12,0	0,1	12,0	12,0	12,0	12,0

	Հողի հարկ	2450,6	2596,9	2150,7	2099,3	2100,0	2200,0	2250,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	450,0	500,0	550,0	600,0	650,0	750,0	800,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	450,0	500,0	550,0	600,0	650,0	750,0	800,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	0	12,0	12,0	20,0	25,0	30,0	30,0
	Տեղական տուրքեր	0	12,0	12,0	20,0	25,0	30,0	30,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ	0		0				
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	0		0				
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7448,3	7448,5	7448,5	9688,4	10000,0	11000,0	12000,0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	7448,3	7448,5	7448,5	9688,4	10000,0	11000,0	12000,0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	7448,3	7448,5	7448,5	9688,4	10000,0	11000,0	12000,0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	418,0	418,0	418,0				
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3.	ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ*	400,0	420,0	420,0	420,0	420,0	420,0	420,0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	400,0	420,0	420,0	420,0	420,0	420,0	420,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	400,0	420,0	420,0	420,0	420,0	420,0	420,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							

3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*		115,5	500,0	500,0	500,0	500,0	
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		15,0	15,5	20,0	20,0	20,0	
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր				100,0	100,0		
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր				100,0	100,0		
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2.	Պաշարների իրացումից մուտքեր							
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)							
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ (1+2)							
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							

	-հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	-բյուջետային փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ								
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն								
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր								
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր								
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում								
2.2	Փոխատվություններ								
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր								
	-փոխատվությունների տրամադրում								
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը								
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս								
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս								
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ								
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	-հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	-վարկերի ստացում								
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	-փոխատվությունների ստացում								
	-ստացված փոխատվությունների գումարի մարում								

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Անհրաժեշտ է նաև նկատել, որ համայնքի բյուջեն չունի մեծ ծավալի մուտքեր ո՛չ համայնքի ոչ ֆինանսական ակտիվների (հող, գույք) իրացումից և ո՛չ էլ փոխառու

միջոցներից (փոխատվություն, վարկ): Սա նշանակում է, որ համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր միայն՝ համայնքի վարչական բյուջեի ծախսերը նախատեսելուց հետո ընդհանուր մուտքերի մնացորդ գումարը վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցով փոխանցելով համայնքի ֆոնդային բյուջե:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (8 միավոր) միայն աշխատավարձի տարեկան գումարը կազմում է 7,068.0 հազ. դրամ = 589.0 հազ. դրամ x 12 ամիս, իսկ մանկապարտեզի աշխատողների (5 միավոր) աշխատավարձի տարեկան գումարը կազմում է 1,1119.9 հազ. դրամ = 247.9 հազ. դրամ x 12 ամիս, երկուսը միասին՝ ընդամենը 8,640.0 հազ. դրամ: Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև համայնքի աշխատակազմի և մանկապարտեզի պահպանման ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման բոլոր ուղղությունների, ապա կստացվի, որ համայնքի աշխատակազմի և մանկապարտեզի պահպանման ընդհանուր ծախսերը կարող են տատանվել մոտ 11,000.0 - 11,000.0 հազ. դրամ գումարի սահմաններում: Սա էլ նշանակում է, որ համայնքի 2016-20թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3) հնարավորություն կլինի կատարելու մոտ 3.0 մլն-ից մինչև 7.0 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի և մանկապարտեզի պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա, բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցները կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարն այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա կապիտալ ծախսեր կատարելու համար:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԾՐԱԳՐԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա չորս տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 4)՝ ընդգրկելու համայնքի 2017-21թթ. ՀԶԾ-ում:

Աղյուսակ 3. 2017-21թթ. ՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը հազ. դրամ)
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	9000.0 (տարեկան)
2.	Համայնքի մանկապարտեզի պահպանում	3000.0 (տարեկան)
3.	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	60.0 (տարեկան)
4.	Համայնքի հանդիսությունների սրահի ջրազծի և կոյուղու անցկացում, գազաֆիկացում	500.0
5.	Համայնքային կենտրոնի վերանորոգում	10000.0
6.	Համայնքը մայրուղուն կապող 2 կմ ճանապարհի ասվալտապատում	70000.0
7.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1500.0
8.	Համայնքի խմելու ջրի ցանցի վերանորոգում	2000.0

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ազդեցությունը արտագաղթի կանխման վրա,
- համայնքի կարողությունների հզորացում,
- բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ որոշվել են վերևում առաջարկված համայնքային ծրագրերի առաջնահերթությունները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Համայնքային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավ. արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բայ)					Ծրագրի առաջնահերթությունը
			Հանրության աջակցությունը	Ազդեցությունը արտագաղթի կանխման վրա	Համայնքի կարողությունների հզորացում	Բնակչության սոցիալական պայմանների բարելավում	Ընդամենը (բայ)	
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	9035.0 (տարեկան)	X	X	X	X	X	1
2.	Համայնքի մանկապարտեզի պահպանում	1900.0 (տարեկան)	X	X	X	X	X	2
3.	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	60.0 (տարեկան)	X	X	X	X	X	3
4.	Համայնքի հանդիսությունների սրահի ջրագծի և կոյուղու անցկացում, գազաֆիկացում	500.0	X	X	X	X	X	4
5.	Համայնքային կենտրոնի վերանորոգում	10000.0	8	4	7	8	27	5
6.	Համայնքը մայրուղուն կապող 2 կմ ճանապարհի ասվալտապատում	70000.0	9	4	8	9	30	6
7.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1500.0	9	4	8	9	30	7
8.	Համայնքի խմելու ջրի ջրագծերի վերանորոգում	2000.0	8	4	7	8	27	8

Համայնքի աշխատակազմի և մանկապարտեզի պահպանման ծրագրերը նախկին տարիներին մշտապես իրականացվել են և առաջիկայում ևս նույնությամբ իրականացվելու են, դրանք համարվում են համայնքի ամենաառաջնահերթ երկու ծրագրերը և ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեների շրջանակում համապատասխան ծախսային նախահաշիվներով, այդ պատճառով ՀԶՀԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Աղբահանության ծառայության մատուցման համար մասնավոր բեռնատար մեքենայի վարձակալության և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ծրագրերը համարվում են յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող, և ՀԶԲԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման ծրագիրը համայնքի կարիքների համար անհրաժեշտ գույքի միանվագ գնման առաջնահերթ ծրագիր է, որի առանձին ձևակերպման անհրաժեշտությունը նորից չկա:

Առաջարկվող ծրագրերի անձնագրերը, ՀՀԶՖ ֆինանսավորման ամփոփաթերթը և մոնիթորինգի անձնագիրը ներկայացվում է **Հավելված 3-ում**:

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Քանի որ համայնքը չունի իր տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն), իսկ այդ փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն, համաձայն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, համայնքն է, քառամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝ կազմելու համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների նախահաշիվը: Համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախահաշիվային արժեքը հաշվարկելուց հետո միջոցներ կձեռնարկվեն՝ հայթայթելու պահանջվող գումարը ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ), քանի որ համայնքի բյուջետային միջոցների ներկայիս սուղ վիճակն առայժմ թույլ չի տալիս կատարել նմանատիպ ծախսերը համայնքի բյուջեից:

Համայնքի համար անչափ կարևոր այս հարցի լուծման այլընտրանքային տարբերակ է դիտարկվում մոտ ապագայում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում խոշորացվող համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծումը, քննարկումը, հաստատումը և կիրառումը՝ խոշորացվող համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ

2017-21թթ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համագործակցել Ապարանի անտառտնտեսության հետ՝ համայնքի անտառային ֆոնդի պահպանությունը, մասնավորապես՝ անտառում ձմեռնամուտի սանիտարական հատումները, սահմանված նորմերին համապատասխան պատշաճ մակարդակով իրականացնելու համար,

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, գերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- տարածաշրջանի այլ համայնքների հետ ծավալել միջհամայնքային համագործակցություն՝ լուծելու ընդհանուր աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպման և մատուցման հարցերը,
- սահմանել վերահսկողություն համայնքին տնտեսական ջրի մատակարարման ջրային ավազանում՝ արգելելու անասունների մուտքն ավազան, կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման և ծաղկեցման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ համարյա թե չունեն, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքում խթանել անասնապահական, թռչնաբուծական և մեղվաբուծական մթերքների (մասնավորապես՝ կաթի, մսի, ձվի, մեղրի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- համայնքում դնել էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծման հիմքերը՝ ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում, հասարակական սնունդը, սպասարկումը, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը,

- աստիճանաբար նորոգել և բարեկարգել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,
- համայնքային կենտրոնում տարեկան 2 անգամ կազմակերպել համայնքի գործարարների հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, ցուցահանդես-վաճառքներ, փորձի փոխանակման և այլ միջոցառումներ:

Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկերի կառավարմանն ուղղված՝ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2017-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,
- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում,

- գերեզմանատների գործունեության կազմակերպում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,
- համայնքի հանգստի վայրերի, խաղահրապարակների, կանաչ տարածքների խնամքի և պահպանության կազմակերպում:

ԵԶՐԱՓՈՒՄ

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀԶՀԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք չորս տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶՀԾ-ում 2017-21թթ. համար նախատեսված ոլորտային ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման, ընդունման և իրականացման համար: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը կհանգի հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք չորս տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար, համայնքի 2014-17թթ. ՀԶՀԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա չորս տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական եկամուտների) փաստացի կատարման մակարդակից և դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶՀԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի), ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Արագածոտնի մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատ գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՀԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

ՀԶՀԾ-ում կամ տվյալ տարվա բյուջեում ներառված ծրագրերը կամ ծառայությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, նախատեսվում է, որ յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության համար կսահմանվեն և կգնահատվեն դրանով նախատեսված աշխատանքների կատարման որոշակի ցուցանիշներ, որոնց միջոցով էլ կգնահատվի տարեկան առաջընթացը ՀԶՀԾ-ով սահմանված՝ համայնքի միջնաժամկետ նպատակներին հասնելու գործում:

ՀԶՀԾ-ի կառավարման հանձնաժողովը տարին երկու անգամ կիրականացնի ՀԶՀԾ-ի տվյալ տարվա համայնքային ծրագրերի և ծառայությունների ներքին մշտադիտարկում (մոնիթորինգ), որի արդյունքները կներկայացվեն համայնքի ղեկավարին, վերջինիս կողմից էլ՝ համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՔԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի իրականացման յուրաքանչյուր տարվա և քառամյա ժամկետի ավարտին ՀԶՀԾ կառավարման հանձնաժողովի կողմից կկատարվի դրա տարեկան կամ քառամյա գնահատում՝ ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի, ծառայությունների և աշխատանքների կատարման ցուցանիշների սահմանման և գնահատման միջոցով:

ՀԶՀԾ-ի տարեկան կամ քառամյա գնահատման արդյունքների հիման վրա ՀԶՔԾ կառավարման հանձնաժողովը կկազմի ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ քառամյա հաշվետվությունը և կներկայացնի համայնքի ղեկավարին: Այդ հաշվետվության նպատակը կլինի՝ վեր հանել համայնքի առանցքային սոցիալ-տնտեսական զարգացումները մեկ կամ չորս տարվա ընթացքում, բացահայտել բացթողումները, թերությունները և շեղումները հաստատված ՀԶՀԾ-ից:

Համայնքի ղեկավարը, մինչև ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ քառամյա հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը, կկազմակերպի և կանցկացնի դրա աշխատանքային և հանրային բաց քննարկումներ 15-օրյա ժամկետում՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, համայնքում գործող պետական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների կազմակերպություններին, շահագրգիռ այլ անձանց: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը, դրա հանրային քննարկումների ժամանակ համայնքի հանրությունից ստացված և ընդունված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքը և կից այլ փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ավագանին ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ քառամյա հաշվետվությունը կքննարկի օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով և կկայացնի համապատասխան որոշում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, համայնքի ղեկավարը ՀԶՔԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները, օրենքով սահմանված կարգով, ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

